

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թագմ. 1924, էջ 414)

ՂԷ.

Կարճատու նամակ մը, որ բաց ի զորովանքի գեղեցիկ. արտայայտութենէ մը առ Միւթար, կը ներկայացնէ մէկ երկու դէպքերու հետ ազգային սովորութիւն մը Գլուծի հայ զաւուծին մէջ:

Օ. Յ. Գ.

Գերապայծառի և Գերայրգեցելոյ տեառն Միւթարայ Արքայի
Շորք մերտով մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զողջոյն, և այլն.

Որպէս մեղուն փափաքի զարնանային և ամառնային ծաղկանց, զի անտի ծծիցէ զքաղցրութիւն մեղերն, նոյնպէս և էս տառապելու փափաքիմ զարնանային և ամառնային քարտիկաց Գերարգելութեանդ, որպէս զի անտի ծծիցեմ զքաղցրութիւն միւթար, բութեան... .. մի քարտէզն Գերարգելութեանդ (թէպէտ և իցէ կշտամբողական) արժէ ինձ աւելի քան զհազար Ամէնօղջիւս և էլիզապէթապօլիս... այժմ վերստին սկսեալ է ժանտամահն ի հոռեկարիայ, և առաւել քան զառաջինն արգելեալք են ճանապարհքս ի պէշէն կարեն անցանել առ մեզ տառնց զօնդօմացիայի. բայց աստի ոչ կարեն անդր անցանել: Իսկ Հայք բազմիցս գնան ի պէշն Բօշդայով...: Եւր տէր Նիկօլն վաղճանեալ է...: Աստ թանկութիւն հացի է, և սիրոյ և միաբանութեան մանաւանդ ի մէջ հայոց...:

Յամի Տեառն 1740

Օգոստոսի 7

Ի Գլուծին սէմինարն

Պատրաստական ամենայնի

Նուաւտագունեղ ծառայ

Հ. Թէոդորոս Յովհաննիսեան

Կրօնաւոր ի Կարգէ Ս. Ա. Աբ.

P: S: Գ. Յայմիկ ամսոյ 15ին ի տօնի վերափոխման սովորք են գալ ի գլուծն հայք թափօրիւ ի Կեռլայէն և ի Պաշտալովէն, ի լիակատար Ներսէս զութիւն յեկեղեցին շէզվիթաներուն. վասն որոյ շէզվիթայքն ամսով յառաջ խնդրեցին զիս նախապատրաստել առ ի հայնակ զքարոզ ասել ի նմին աւուր. և սկսեալ էի նախապատրաստել զքարոզ: Բայց աստ էս եհաս նախանձ բանարկութիւն. քանզի դրդեաց զՏէր Նիկօլն դօ տէրաշնան գալ ի գլուծն, և խնդրել վասն քարոզութեան, զի մի այլ ոք քարոզեսցէ, այլ ինքն:

ՂԸ.

Հաստ մը տեղեկութիւններ կու տայ Հ. Թէոդորոս զանազան նիւթերու շուրջ, որոնց կարգին կը գտնենք նաեւ Ստեփաննոս վարդապետ Լեւադայ (Ռոշըայի) մաս հուան գումը: Եթէ հետագայ նամակին գրութեան թուականին (1740ին) վախճանած համարինք ատուգիւ դեռ տարի մը երկարած է'ըլլայ անոր արդիւնաշատ կեանքը'.

0: 6: 4:

Գեղարդեցիոյ, և Գերիմաստի Տեառն Միւխրարայ Սատուածարեւոյնիւն Վարդապետի, և Երբագումնիկի Հօրի մերումը ընդհանրականի, արարութիւնը անկեայ՝ զոտու համբոյնը զատուցանելը զողջոյն, և այլն:

... մինչ ևս էի կեռլայ՝ եկն բարդուղիմէս վարդապետն ի կեռլայ յանձնարա-
կան գրով Նուեցիոսին, և կամի բնակիլ անդ, ոչ որպէս հոգաբարձ քահանայ, այլ իբրեւ
զեկն, որում կայսրն վճարէ յամէ ամ 400 տուգաթ, և այժմ վճարեալ է նմա զհաշիւ
երկից ամաց 4300 տուգաթ: Աստէն մեծ նուագութիւն զոյ հացի և գինւոյ, զի եղեամն և
հեղեղք անձրեաց ապականեալք են զարտորայս և զայգիս: Քանզի 16 յաւյ ցորեանն,
որ լատիներէն ասի Metrean, այժմ յաւուրս հնձոց, յորժամ ցորեանն է առատ՝ 16
օրան կամ մի metrean վաճառի 6 լիտրէ, այսինքն 24 թուարը... Ի կողմանէ խաղա-
ղութեան, ոչինչ հաւատարի լուր զոյ, քանզի ինքեանք իսկ զինուորական պաշտօնատարք
տարածայնին ի միմանց. քանզի ոմանք տեսն. լինի հաւատարի խաղաղութիւն ի մէջ
ալլամանին և տաճկին. իսկ ոմանք ոգեն զհակառակն... Բազումք մահաբք սեպուհք
խնդրեն զիս զնալ առ նոսա առ ի լինիլ զաքէլլան. բայց ես պահելով զխրատս և զզանոս
Գերյարդելութեանդ՝ ոչ կամիմ զնալ առ նոսա... Ստեփաննոս վարդապետն Լէհացին
վախճանեալ: Եւ Տէր սիմէոնն կամի զնալ անդ, և ասաց ինձ, զի եթէ կամիցիմ՝ զնայ-
ցեմ և ես ընդ նմա: Ես իրաւի յօժաղութեամբ զնայցէի, թէ ունիցէի զհրաման ի Գերյարդե-
լութենդ... Յոյժ ուրախացայ յորժամ լուայ զաւարտուն շինուածոց մենաստանին...
Վեր. Տէր Մինաս Աւագէրէցն կեռլայու իբրեւ լուալ յինէն, թէ վախճանեալ իցէ խալա-
տուր վարդապետն, հրամայեաց հնչեցուցանիլ զզանգակս, և զայնաւոր Պատարագ ասաց
վասն հոգւոյ նորա. նաեւ եղբայրն իւր Վեր. Տէր Սիմէոնն...

Յամի Տեառն 1740

Հոկտեմբերի 25

ի կեռլայ

Նուատագումնիկ Երանայ

Հ. Թէոդորոս Յովաննիսեան

Կրօնաւոր ի կարգէ Սրբոյն Անտօնի Աբբայի

ՂԹ.

Ստեփաննոս Ռոշըայի երկասիրութիւններէն ամենէն կարեւորն ու յարգին կրնանք
համարիլ Հայ-Լատին և Լատին-Հայ իր ընդարձակ երկնատորեան Բաւարանը: Անոր
կազմութեան նկատմամբ հետեւեալ վաւերացողութիւն մասնաւոր արժէք և կարեւորութիւն
մ'ունի, որովհետեւ մեր նախնայգիքը յոյժ շահեկան ու մանրամասն տեղեկութիւններ
կու տայ:

1. Զարդանաւեան՝ մահուան թուական նշանակած է 81 հոկտ. 1789 (տե՛ս Բ. Նոր Մասնեագրութիւն, 1906, էջ 887):

Հրատարակութեան առաջարկը որ եղած է առ Մխիթար՝ արդիւնքի մը չէ յանգած, ու պատճառը ծանուցանող որ և է թուղթ մ'ալ չունինք ձեռքերնուս տակ: Մեր Մատենադրութեան ծանօթ է սակայն, որ Ռաշքայի այդ երկասիրութիւնը ցայսօր անտիպ կը մնայ. իսկ բռն բնագիրը կը գտնուի Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին մէջ «Գանձ Հայոց Լեզուի կամ Բառարան Ստեփանեան» տիտղոսով, իսկ Ս. Ղազարու Զեռագրատան մէջ կայ ուղղակի անոր վրայէն 1840ին կատարուած օրինակութիւն մը մեր Հարց կողմանէ:

Օ. Յ. Բ.

Գիրաւարձութիւնի և գերադասելոյ Տիառնց Մխիթարայ Արքայի Հօրք մերում հասարակի՝ մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զորդական ողջոյն, և այլն:

Յայտ առնեմ Գերաւարձութեանդ, զի Հոկտեմբերի 25ին յոցի զգիր մի աստի ի Կեդուլին առ Գրչարգելութիւնդ, և ծանուցի ի նմին զորպիսութենէ իմմէ, և թէ զհաւոյց եմ ի Պաշխալոյ: Բայց մինչեւ ցայս վայր ոչ կարացի չուել աստի, ոչ վասն այլոյ պատճառի, քան վասն դժուարաճոծ և անհնարին և անպատում ցեխալից ճանապարհաց, որք զարհուրեցուցանեն զմարդն ի յեւանելն ի տանէն. և այս ոչ միայն ի քաղաքս և ի գիւղս, ի դաշտս և յանդատտանս, այլ նաեւ յանապատս և ի լեռնիս, և յամենայն ուրեք լիք են ճանապարհքն ցեխիւ և լաղախով: Եւ պատճառ սորին է, զի Յամիքս են, յորմէ հետէ զրեթէ յամենայնում աւուր անձրեւեաց յառաւօտէ մինչև ցերեկոյ, և յերեկոյէ մինչև ցառաւօտ. և այսպէս՝ հաշուեալ թէ փոսեցաւ գետինն, և պատառեցաւ երկիր: Եւ վասն այսորիկ ամենայն ինչ տասնապատիկ թանկ է քան յառաջ, զի ցորեանն ի դէզոն ծլեալ է և փոսեցաւ, և այլն... և Գերաւարձելի Տէր Ասազէրէցն Աւմէնօպօսոյ, այսինքն Վերապատուելի Տէր Մինասն Թորոսեան, և իւր եղբայրն Վեր. Տէր Սիմէոնն մեծաւ սիրով և խոնարհութեամբ զողջոյն մատուցանեն և խնդրեն զիւր ինչ ի Գերաւար. զեւթեմբերէն: Իսկ խնդիրքն այս ինչ է. զի (որպէս յառաջագոյն զրեցի) ողորմած հոգի Աստեփանոս Վարդապետն Թողեալ է զկնի իւր զանջնջելի յեշտակ, զպատու աշխատութեանց երեսնից ամաց, այսինքն զազնիւ, զմեծագին և զոյժ պիտանի զիրք իմն, յորում աշխատեցաւ զրեթէ զամենայն աւուրս կենաց իւրոց: Ասեմ աշխատեցաւ. քանզի անխոնջ աշխատանք զ30 ամս երկասիրեաց ի վերայ նորա: Եւ այս է Բառզիրքն երկուց լեզուաց, այսինքն Հայկականի և Լատինականի. և է Գանձարան ամենայն բարոյց, մեծաւ արհեստիւ հաւաքեցաւ ի անթիւ զրեանց հայկականաց, և մեծագունիւ արհեստիւ կարգաւորեցեալ և զետեղեցաւ ի սեպհական տեղւոյ, այսու կարգաւ. քանզի ի նմին՝ նախ զնի բառն հայկաբանական, յետոյ մեկնի հայկաբանօրէն, և ի վկայութիւն բերի հեթիմական և զիրքն, յորմէ արտահանեցաւ բառն, նաև զանազան զգացմունքն, ի յորս առնանի ի զանազան տեղիս: Զկնի սորա զիին նաև բառք աշխարհականք, որովք առաւել բացատրի զբարառն, հուսկ յետոյ զիին բառք լատինականք հանդէպ Հայկականին, որպէս վկայէ Վեր. Տէր Սիմէոնն, որ եղև ազնաւատես զամս բազումս, մինչ էր աշակերտ վերոգեցեալ Ստեփանոս Վարդապետին: Եւ կարծեմ թէ է այնպիսի գործ, մինչ զի յազգի մերում ոչ երբէք եղև, նաև ոչ կարծեմ թէ լինելոց իցէ, որպէս վկայէ վերոգեցեալ Վեր. Տէր Սիմէոնն. ևս թէպէտ ոչ տեսի զայն ցայսվայր, զի է ի Լէնաստան: Չստ ամենայն յանձնեն, նուիրեն և տեսանազրին Գերաւարձութեանդ և Մենաստանին մերում, և խնդրեն զի հանձնէ Գերաւարձութեանդ ի լոյս ածել զնա ի ձեռն տպագրութեան. և ինքեանք զծախս ճանապարհին արտօցեն, մինչև զիրքն հասանիցի ի Մենաստանն մեր. և թերեւս

1. Տաշեան, Յուլիան Զեռագրոց, Հտ. Ա. Գիրք Բ. ԹԻ. 6, էջ 221.

նաև օգնեցին այլոց ծախից տպագրեցմանը, եթէ Գերարգելութիւնդ յանձն առնուցու տպագրել: Եւ պատճառաւ սորա կարեւոր նաև զայլս աղին և սակաւագիւտ գրեանս զտանել և ստանալ, քանզի վերջ. Տէր Սիմէոնն գնալոց է յայսմիկ ձմեռան ի Լէհաստան առ ի բերել զբաղդիքն. և (որպէս ի միւս թղթին գրեալ եմ) եթէ կամք իցեն Գերարգելութեանն՝ գնացից և եւ ընդ նմա անդ, զի որպէս յուսադրին զիս՝ կարեմ զբազում աղին գրեանս անդէն շահել: Ամենայն ինդրեմ, և նոքա ի միասին խնդրեն, զի հաճիցի Գերարգելութիւնդ շուտով յղել զպատասխան գրոյս, որպէս զի կարիցեն բարեպէս տրամադրել զայսմանէ իրէ: Բաւեցիցի այսքանս: Եւ այսու ժամ Գերարգելութեանդ պատրաստական յամենայնի

յԱմի Եեան 1740
Գեկտեմբերի 4
Ի Առնէնպոլիս

Նուստագունեղ Դսոայ
Հ. Թէոդորոս Յովաննիսեան
Կրօնաւոր ի Կարգէ սրբոյն Անտօնի Աբբայի

Ճ.

Վախճանեալ Պատրիարքն է Բաղիշեցի Յովհաննէս Կոլոտ: Ասոր մահուան և ապա յաջորդին գահակալութեան մասին Չամչեան եւ ճիշդ նոյն կերպով այսպէս կ'արտայայտուի. « Ի յաջորդ ամի անդ (1741) եհաս վախճան կենաց յովհաննէս « պատրիարքին յամենանի փետրվարի. և մեռաւ զգաստութեամբ և բարի մահուամբ. « և թաղեցաւ առ դրան եկեղեցւոյ լուսաւորչին. և ի նմին իսկ աւուր զգեցաւ յակոր « նալեան յարքունի դրան զգեստ Պատուոյ իշխանութեանն, և նստաւ հանդիսի « յաթոռ պատրիարգութեան »:

Մեր վաւերագիրը կը յաւելու նաեւ իբր մանրամասնութիւն վերոյիշեալ ղէպքին՝ հետաքրքրական կարգադրութիւն մը և անոր մէկ հետեանը:

Գերարգելեցոյ տեսան տեսան Մխիթարայ Արքայի Հօր մերոյ

... Պատրիարգ Կոստանդինպոլսոյ յօհաննէս վարդապետն ի փետրվարի ամիսն անդրափոխեցաւ աստի կենաց ի ժամն լուսաւորչաց և անդ թաղեցաւ. և ի տեղի իւր եղ պատրիարգ նաջողու յակօր վարդապետն: Արդ՝ յորում աւուր վախճանեցաւ պատրիարքն, ի նոյնում աւուր հազաւ զկապալ ի դրանէ. և յօրէ յայնմանէ հրամայեցաւ ամենից եկեղեցեաց մինչև ի քառասուն օր բաց պատարագ առնել վասն հոգւոյ պատրիարգին: Բայց ի սուլումանաստր պատմաճը օղլու կոչեցալ զժոխբերանն՝ ասելով օրինազանցութիւն բաց պատարագ կատարելն ի քառասորդական պահոց, զոց պատարագ արարեալ է. և ի միւսում աւուր կոչեցեալ ի նոր պատրիարգն առնելն, զբազում նախատինս ընկալեալ է ի նմանէ. նաև արգիլեալ զնա յաւիտեան յեկեղեցիին ոչ զծառնուցումն առնել և ոչ զքարոզ տալ. և եղբօր նորա տէր մարտիրոսին շնորհեալ զմի փիլոն նախագահ արարեալ է զնա: Մարտի 9 փիղ անցուցին ի ուսկուտարու ի պէշիկուտաշ, զորս բերեալ եղև դեսպանն կարմիր գլխոյն. և ինքն դեսպանն տակաւին է ուսկուտար. և և մուշտակի դեսպանն ի մաքրեղն է ...

Յամի տեան 1741
և մարտի 10
[Կ. Պոլիս]

Գերափայլութեան ձեռում
Նուստագունեղ ծառայ
Ս. տ. ս. Հայր Պօղոս Վարդապետ

1. Չամչեան, Պատմ. Հայոց, Հր. Գ. էջ 824.

Շարունակելի

Հ. ՂԵՆՈՐ ՏՄԵԱՆ